ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

07.09.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Ռ.Մարգարյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Լ.Աբրահամյանը- մարզպետի խորհրդական
Ս.Սարգսյանը- մարզպետի խորհրդական
Է.Կռոյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ա.Երիցյանը, Վ.Եղիազարյանը, Վ.Դանիելյանը, Վ.Հովհաննիսյանը, Լ.Մաթոսյանը, Ա.Դեմիրչյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ա ն ա մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

Ելույթ ունեցավ ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանը, նա ներկայացրեց նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՀ Լոռու փոխմարզպետներ Ռ.Մարգարյանը և Ա.Ղարիբյանը, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. **ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ռ.Մարգարյանին և աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության պետ Վ.Ղարսայանին՝**

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից մինչև ս.թ. սեպտեմբերի 20-ը ներկայացվող սուբվենցիոն ծրագրերի ամբողջականության, հիմնավորվածության և նախագծերից շեղումների բացակայության պահանջների

կատարման ուղղությամբ, դրանց բացակայության պայմաններում՝ նախագծերը վերադարձնել լրամշակման:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյանին, աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Երիցյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել հեծանվավազքի մրցաշարի միջոցառման անցկացման պատշաճ կազմակերպման հետ կապված, ինչպես նաև ներկայացնել տեղեկատվություն Վանաձորի օրվա նախատեսվող միջոցառումների անցկացման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի օգնական Հ.Հակոբյանին՝

Ներկայացնել ամբողջական և վերջնական տեղեկատվություն քարոզարշավի ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի, խնդիրների և դրանց լուծման նպատակով իրականացված աշխատանքների վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզի ուսումնական հաստատությունների վարչատնտեսական համակարգողների թափուր տեղերի և դրանց համալրման գործընթացի վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերով վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

Ներկայացնել թվային և գումարային տեղեկատվություն Լոռու մարզի պետական ապահովագրական ծրագրից օգտված քաղաքացիների վերաբերյալ՝ 2026թ. հունվարից մինչև սեպտեմբերն ընկած ժամանակահատվածի համար:

6. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզի համայնքների անտառապատ տարածքներում հեռագնա արոտների ճանապարհների օգտագործման, ինչպես նաև հողերի օգտագործման տրամադրման նպատակահարմարության վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Մ.Խեչումյանին՝

Լոռու մարզի համայնքներում ընտրությունները իրականացնելու գործընթացի պատշաճ կազմակերպման և անցկացման նպատակով՝ անհրաժեշտ իրավական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերել համայնքների ղեկավարներին:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-09-07 17:45:59 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /2-10-24/